ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մարտի 2013թ. թիվ 29-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013թ. փետրվարի 21-ի թիվ 54-Ա որոշման՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2013թ. մայիսի 26-ին նշանակել Լոռու մարզի Լեջան համայնքի ավագանու հերթական ընտրություն և այդ համայնքի նորընտիր ավագանու կողմից լիազորության ստանձնման ժամկետ սահմանել 2013 թվականի օգոստոսի 31-ը:

2. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝ սույն որոշման մասին ծանուցել Լեջան համայնքի ներկայիս և նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. մարտի 5
ք.Վանաձոր